

մի կայ, երկու դին պատաճ դրյգ մի թռոչ-նովիք կոտոց կըտցի, որոյ փրայ նրբագիծ ուղղակի թռչելու ձեւով ազաւնի մի թևա-բաց՝ այլ զլխիվայր՝ իրը Ա. Հողի, որ կոտոցով բռնէ վերին մասը, որ է սկիհ մի՛ խա-շանի նշխարաւ ի վրայն».

Ցետ զարդաձեւից՝ պատկերագիրն ուզեր է վարժեցընել զարդագրերու, այսինքն զար-դերով գիրեր ձեւացընել, թէ պարզ գծերով և թէ օղակներ կամ առողիկ, շատ հեղթունով բաղադրեալ, քիզ հեղ ձկամբ: Ա-սոնց օրինակ ըլլան մեր թիւքն 1-6. երկու ձ, երկու ն, երկու Շ տառը. 7 թիւ ման-շին այլ ներկայացընէ Փ գիրը: — Այս եր-կու իրը տարրական ձեւանկարներէն զատ՝ զրոց այլ և այլ իից մէջ, բայց աւելի սկիզբ-ներում՝ կան քանի մի կանոնաւոր ձեւով զարդը և քանի մ'այլ քմահաճոյք և հնարա-դիտականք: առաջիններուն կըրնայ զարդափար մի ըլլալ բոլորակն թիւ 8. երկորդ տեսակին միւս մեծ բոլորակն, թ. 9. երեք շանց կամ

գազանաց, զիրար խածատելով: Երբեմն թե-ւաւորաց և լուղակաց այլ այսպիսի իրարան-ցումն նկարեն ձեռագիրք, և երբեմն այլ զա-նազան մարմնոց մէկ զլուի մի յարմարցը-նեն, ինչպէս այդ երեք ձկանցն, թիւ 10: Մի՞ր՝ միին երբեմն և հին և նոր ձեռագրաց ծանոթիք շատ հեղ կու տեսնեն անոնց մէջ, մանաւանդ ի ճակատու զարդանկարոց՝ կո-լագմէն թուուններ, որ հին առասպելեաց և հաւատոց շլուոր են, և շատ ազգաց յի-շատակարանաց մէջ այլ տուոին: այսպիսի է մեր պատկերագրոց մէջ ընթայելոց մէկն, թ. 11. կան քանի մի հաս եւս աւելի սուր նայուածքով թունուկիք: Ուրիշ ասոնց նման կամ անման՝ բնական կամ անբնական զարդերն ու նկարները՝ պիտի յիշենք ուր որ հանդիպին, և ինչ կտրդաւ որ ցուցընէ զրոց զիմակուան հաւաքումն, որ թուի այլայլած և պակսած հեղինակին կարգածէն:

Շարարայելի

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՅԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

(Տես յ'էջ 200)

— 3 —



ՅԺՄ վենետիկն պէտք է նորէն անց- սինք ի Զուղա, ուր արգէն մեր բն-թերցողաց ծանօթ տպարանէն վերջին եր- կու հրատարակութիւնք՝ կ'ըլլան ի 1687 և ի 1688, և կը լուէ այնուհետեւ հայիսկան մամու՝ մինչև մեր օրերուն նոր կեանք մը ստանալը: Այս կրիին հրատարակութիւնք են, առաջինն՝ Աղեքաննոր վարդապետի Զուղա-յեսայ, յետայ կաթողիկոսի, գիրը մը հե-տեւելու խրուտրու: « Գիրը որ ասի վի-ճաբանական, ներտապազեցեալ ի տպարա-նում արբայ Ամենափրկի վանաց Նոր Զու-ղայու: ի հայրապետութեան տեսան Եղիսա-քարու... և յառաջնորդութեան այսմ նահանդի

տեառն Ստեփանոսի յայտածողի զապազրա- տունս և հրամայողի առնել զգիրս: Աշխատա- սիրութեամբ ումեմն նուաստի՝ տէր Աղեքանն- որի ծառայի բանի, ի թուականութեան Հայոց Ռէջլջ: »: Յէշն Ց իրրու յառաջարան « Առ քրիստոսաւէր և յաղզագաւան ժողովուրդագ հայկական՝ ի Քրիստոսի նուաստ ծառայից ծառայ Աղեքաննոր պիտականուն վարդա- պետէ յայտարարութիւնն ու Զունի մասնաւոր յիշատակարան բայց հետեւեալ սողերը:

Խնձ ողբերնա՛, տէր իմ Ցիսուս, Աստուած և Բան, Աղեքաննորք քո ծառայից որ պարտական, Ու եմ նորպաստ ասկու բանից որ ասացան: Զիսյէնացն յաւուր մեծի քոյ գալըստեան:

Հազար հարիւր նրեսուն և մին էք թուական։  
Զայս բան գտնելի վասն դրէւին զաւանութեան։  
Առ հանգստից պիտի եղբարք ողջապատճեան։  
Զի՞ս յիշեսչիր վասն յաւայ տըբացութեան։

Զսակաւ աշխատողս ոորին և զյարմարող  
զԱղիքանողը՝ անուամիք եւեթ բանի սպա-  
սաւոր՝ յիշել աղասեմ ոյլ զասր ուղղափա-  
ռաց հայկական տոնին ։ ի թուոջ ՌՃՂԱ ։  
Եղեւ կատարումն տպագրութեան զրոց ի  
գանս արքայանիստ և ի գեօղաբազարիս Զուղա,  
ընդ հովանեաւ սուրբ Ավենափրկի վանացու,  
ի թուին ՌՃՂԱ, և զթիւ տպոյս է հինգ  
հարիւր։

Այս տպագրին մէջ կը յիշուի Ստեփա-  
նոս ոնև յայտածող տպագրատանս և հրա-  
մայող ատենի զգիրս։ որով թէ տպարանին  
հաստատութիւնը և թէ տառից յօրինումն և  
ձուլումն իրեն կ'ընծայուի։ Հետեւեալ տար-  
սոյն հրատարակութեան յիշաստակարանին մէջ  
աւելի բացայաց կ'երենայ իր անձնաւորու-  
թիւնն և արդինիք յարուեստի տպագրութեան։  
Այս զիրքն է Մըքուզ Յոլիշաննու Զուղա-  
յեցոյ երկասիրութիւն, այսպիսի խորագով։  
« Գիրք իսկապէս համառուս վասն և ճշմա-  
րիտ հաւատոյ։ և զաւանութիւն ուղղափառ  
կաթուղիկէ ընդհանուր Հայաստանիաց ե-  
կեղեցոյ, զօրս առար և ունիմք այժմ ի  
Գրիգորէ սուրբ Լուսաւորչէն, և երից սուրբ  
ժողովլյն և ի սրբոց հոգիքնկալ երկստասան  
վարպապետացն... Եղեւ տպագրութիւնը ի  
թագաւորութեան արքայից արքայ Շահ Սու-  
լէման թագաւորին... ի Զուղա, ի վանս  
սուրբ Ավենափրկի ։ ձեռամբ նորին առաջ-  
նորդի Ստեփանոսի արհիեպիսկոպոսի ։ ի քա-  
լանթարութեան պայական պարն Աւետին,  
աշխատող սպարանումն զՄարգիս և զԱսու  
տուածատուր երիցունքն եւս յիշել աղա-  
շեմք և Գրիգին ճակատէն յաւաջ զրուած է  
այս ծանօթութիւն ի Ստեփանոսէ, ինչպէս  
կ'ըսուի, և բանի պաշտօնէ և վերադիտողի  
մասին Հայոց որբ ի կողմանս Պարօսից։ Գի-  
տութիւն լիցի ձեզ սիրելեացդ, զի զպատ-  
ճառ տպագրութեան մեր է այս։ հետագօս  
եղաք ներկայս՝ զի յոլովք գիրք զոյր յան-  
յատ յումեքէ ի մերայնց նախնեաց սրբոց  
վարդապետաց։ մանաւանդ պիտանիք, հար-

կաւորը և լուսաւորողը։ և թէ ուրեմ ուրեմ  
առ այս և այն դրանի, զի՞նչ շամ և օգուա հա-  
սաւակին։ Վասն որոյ ապահինեալ ի յոյն ա-  
մենից ի սուրբ հոգին։ մկնար ի լուս ածել  
զոսպագուատուն։ առ ի տպել զվաղեմի սուրբ  
զրեանցու։ զոր յես սուզ ժամանակի տպեալ  
առաքելոց եմք առ ձեզ։ Այլ ներկայս և  
թուղթը որ և զիրը եւս վասն ընդդիմու-  
թեան երկարնակաց, թէ ո՞և և ո՞վ ոք աշ-  
խասասիրութեամբ ննշեալ աքնութեամբ ժո-  
ղովեալ և մեկնեալ հօպիվ սրբով ասաւա-  
ծաշոնչ զրոց։ Հոս զրիին մէջ ամփո-  
փուածներն յիշասակելէն ետքը կը յաւելու։  
և Արդ որովհետեւ ոչ զոյր յազգին մերայ  
տպագրատուն։ եթէ տպեալ յոլովցուցեալ  
սփեալ էին ի տուն Հայոց, և ձեռագրով  
համբ այսպէս։ և այսբան լինի որպէս տե-  
սանէքդ։ և յիշել տալ տպել յերկիրս ֆուան-  
կաց, անմարմ և անկար։ Զի մերս զիրը՝  
ինքեանց զրոցն է ներեակ։ վասն որոյ ոչ  
կամին, և ոչ թոյլ առն առ ի բազմանալ  
մերայնց սրբոց վարպապետաց զրեցելոցն։  
Այժմ որովհետեւ պատրաստեալ եղն ի միջի  
մերում գործարան տպագրութեանս, այսու-  
հետեւ անահ և անկասկած տպելոց եմք զա-  
մենայն զգիրեանս սրբոց վարպապետաց որ առ  
մեզ զոյ։ Բայց այժմ զիրկնակի փոքր զրեանսն  
որ զրա և կատարումն եղն։ հինգ հինգ հա-  
րիւրով սփեացաք առ ամենայն լուսաւորչա-  
ծնունդ և ուղղափառ Հայոց. զի են սուրբ  
փոքր գործարանիս և զրութեան։ իբր առ-  
հաւատչեա ի իրափութիւն քրիստոնասիրացդ։  
Քանզի պատշաճ տեսեալ մեր ներկայս զնո-  
սա հարկեալ ի վերայ սիրելի և հարազամ  
եղրաց Յոհաննէս և Պղկէմանզր վարդա-  
պետաց։ որ և իսկոյն թարց տարակուսի  
հոգածեալ։ առաք և տպեցաք զհայցելին մեր.  
որոց քրիստոս լիցի վարձահատոց։ Զինի  
որոց զմեծամեծն և կատարեալն եմք տը-  
պելոցց... Եղեւ սկիզբն և կատարումն սորին  
ի վանս սուրբ ամենափրկի նոր Զուղայու։  
ձեռամբ և հովաբարձութեամբ տեառն Ստե-  
փանոսի նորին պյուղուի ։»

Յիշասակարանն կը յանձնէ « յիշել ի  
Քրիստոս զօրոյց մենարանի աստ գումարե-  
ցելոց։ յուսացչապետ և հոգիրնկալ հօրս մեր-

ոյց Տեսան Դաւթի վարդապետի. ողբ միշտ ի սպասու կան և կատարեն զպաշոսն օրոյց եկեղեցյա. որ և կամակցութեամբ միմեանց ջան եղեալ և գուն գործեալ, ի վերայ գործարանի տպագրութեան. այս ինքն զՄԵցՓյէլ վարդապետն, զՅՌաննէս վարդապետն զշարագրոց գրոյս, զԱղեքսաննըր միշտագարոց վարդապետն. զԵսայի վարդապետն. զԱհարոն վարդապետն. զՇոքէ բարձու վանաց և տպագրութեան զՑէր Անդրէան. զՑէր Թոռման. զՑէր Յոհանն: Ես այլ գործակալք տպագրութեան. և միշտ աշխատողք զՑէր Սարգիսն, և զՑէր Աստուածատուրն ի սրբոց թակորայ. մահասի կոստանդ գպարապետն. զաւաք սարկաւագուննսն, զՄԷթն, զՄԻմէոնն, զՄԻկայէն, զՆերակւսեանքն, զՊոհանէսն, զԱստուածատուրն, Գասպարն, Յանաննէսն, Տէրոնն, Թորոսն, Փիլիպոսն, Պետրոսն, զՅոհանն, զԱնտոնն, զՀայրապետն . . . որ այժմ կան ի վերայ իւրաքանչիք զործոց »:

Նախայիշտատակեալ Զուղայի մէջ եղած հրատարակութեանց հետ բաղդատելով այս երկու տպագրութիւններն, անհամեմատ առաւելութիւն կը տեսնենք յարսւեստի, զրեթէ հաւասար գունելով ասիէ հարիսր և աւելի յառաջ յԵրսուակ եղած հայ տպագրութեանց հետ: Միայն թէ տպագրողաց կողմանէ տըրուած իսոստմոնք՝ նորանոր հրատարակութեամբ գոհացնելու ազգին մէջ արգէն զգալի եղող մտաւորական մուռնը՝ իրենց գործագրութիւնը չեն ունենար: և ցաւելու առիթ մը չենք տեսներ՝ զէթ մեր առանձինն կարծիքով, եթէ հետեւալ հրատարակութեանց նիւթից՝ այս ընծայուած երախայրեաց նման ըլլային:

Հայիսկան մասնական տպագրութեան մ'ալ կը հանդիպինք 1680 թուականին եղած ի Հայպահի կամ ի Լիպսիս Գերմանիոյ, որ և առաջին հայիսկան հրատարակութիւնն է յայնմ աշխարհի, ձեռամբ Անդրէի Ակուլոթի, որ մեր լեզուին հմանացած, և իր զիտութեանը ճաշակ մը ուղեց ընծայել հայրենեաց, առաջին երախայրիք այն անծանօթ բարբառոյն, հրատարակելով Արգիս մարգարէութեան զրոց հին հայիսկան թարգմանութիւն մը. և. այս վախճանաւ սախչուեցաւ իր ծախիքն հայ մասնաւոր տառեր փորա-

դրել, ձուլել և տպագրել. հարկաւ ոչ մեծ ճարտարաւթեամբ արուեստի, այլ մեծապոյն ջանից և փաթոյ յայտարարք: Գրքին հայերէն խորագիրն է՝ Արդիու հայերէն. իսկ լատինականն, Obadias armenus quo cum analisi vocum armenicarum grammatica et collatione versionis armenicæ cum fontibus aliisque maximam partem orientalibus versionibus exhibetur primum in Germania specimen characterum armenicorum in celeberrima accademia Lipsiensi procuratorum, a M. Andrea Acolutho Vratislav. Siles. Anno epochæ Messenianæ MDCXXC, Armenorum MCXXIV. Lipsiæ, Typis Iustini Brandi.

Գրուածքին և անոր հեղինակին վրայ ուրիշ առթով և գրուածքին մէջ պէտք եղած աեղեկութիւններն տուած ենք:

\* \*

ի 1685 հայիսկան նորանոր տպագրութեանց սկզբնաւորութիւն կ'ըլլայ յԱմսդերտամ, վանանդեցի Մատթէի ձեռքով, և տուջին հրատարակութիւնն է Հարականաց գիրք մը, « տպեցեալ, ինչպէս ի խորագրին կը կարգամք, յԱմսդէլուամում քաղաքի, յամի տեառն 1685 ու իսկ ի յիշատակարանին « ... ի տպարանի Մատթէոսի վանանդեցոյ, որ եթ (ենթ) անուամբ յանուն սրբոյ խաչի և ամենօրհնեցելոյ կուսին Մարիամու Աստուածածնի: ի հայրապետութեան տեառն Եղէազարու ամենայն հայոց կաթողիկոսի և յաջորդ սրբոց տպաքելոցն թագիսոի և Բարթուլիմէասի և սրբոյն Գրիգորի լուսաւորչին: Ես նուասսո յամենից Մատթէոս զպիրս եկի ծառայելով ընդ արենակից վարդապետին իմոյ յերիկըն յիսալացւոց և ի մայրաքաղաքն Հոօմ, և վեհն իմ գնաց յայլ սրեց, և ես դարձայ յԱլիկոսնայ առ ոսո աշխարհութիւն տեառն Ասկանայ արհի եպիսկոպոսի և քեսորդույ նորա Մաղոմնի

ամս չորեքտասան , և վարձուց կողմանէ ոչ ինչ ընկալայ . քանզի և աէր թակօր կաթուղիսոն զրեաց առ իս ի Մարտիլայ թէ ընկալայ զհամբաւդ ի քէն զբարւոք ուսանին զարհեստիդ . վասն որյ և զինքր նամակս օրնութեան առաքեցի առ հոգեոր որդեակդ իմ Մատթէոս , զի բարւոք ծառայից ես տեառն Ասկանայ արհի եպիկոպոսի աշակերտի իմոյ , և զինի վախճանի նորա մի ումեր կարօտացիս . այնպէս համարեա թէ ինձ ես արարեալ . որպէս ասէ Տէրն , և ես զբոյ վարձն հասուցանելոց եմ , և եթէ մահ հասարակաց հանդիպի՝ զիեանամաց նասող սրբոյ աթոռոյն պարտին հասուցանել : Սակս որյ ժամանակս բազումն ծառայեցի , և զինի փոխելոյն նոցա առ Աստուած , և իմ տեսեալ զարակրութիւն և զանաջողութիւն յամենայն կողմանց . վասն որյ զիմեցի յերկիրն Հօլոնդիոյ՝ ի վայելուց քաղաքն յԱմմատէլուամ , և զաի վլաւ վարպետ իմն , որ անուամբ Նիկոլայուս ասի՝ ե ետու յօրինել զգիրս այրուբենից բազմօք աշխատանօք , և զայլ աեսակս եւս զրոց նոտրի և բոլորի :

« Եւ ի աւարաման գործոյս՝ ոչ անելով քաւականապէս զրաման վասն տպելոյ զգիրս . և ընկերացայ ընդ տեառն Յօնաննու երեւանցոյ սրբանուէր քահանայի և ընդ Զուզայեցի պարսն Պօղոսին սակս երկուց զրոց միայն Շարակնոցի և Ժամագրքի »:

Այլ եւ այլ անձանց անուան յիշատակութիւնը մազթելէն ետքը կը յաւելու . « Հուսկ . յետոյ և զմեզապարտ զգիր Մատթէոս շարարարոզող և մատակարարօդ և օգնիլ սրբազութեան . յիշեցիք ծնօզնս իմ զօնանէսն և զՄարիամն և զայլ արեանառու մերձաւորն . . . կարի աշխատեցաք ի սրբագրութեան դրա . թէ ի հորսմա անսանց և ի նախադրութիւնն նոցա . թէ ի ժամանակս բայցի և ի կերպաւորութիւնն նոցա , հետեւելով հուեարին Արիստակէսի . վասն ուրոյ երէ ոք հմուս է քերթութեան , և վարժ զրչութեան Արիստակէայ , զացէ և ոչ ինչ պակասեալ ի զրելոց նորին . . . Եւ թէ այլ ինչ սիսակութիւն գտցի՝ այն չէ ի կամաց մերոց այլ ի մոռացմանէ . վասն որյ խնդրեմք

ներել , զպակասն լնուլ և զաւելորդն յապաւել որք հմուտք էք արհեստի և մակացութեան , և զիեզ պահել անմենազպրելի ։ իսկ որք ոչ էք ներհմանացեալ որհեսաից զրչութեան և քերթորութեան , մի այլ ինչ բարուբէք յանզպաբար , այլ ջանացարուց ուսանիլ զգրեալն և աեղեկանալ ներպարութեան . . . » :

Վանանդեցին հետևեալ 1686 թուականին ժամանագրոց տպագրութիւն մ'ալ կը հրատարակէ , « ի տպարանի՝ ինչպէս կ'ակնարկէ ի յիշատակարանին , Մատթէոսի , յամենավայելուզ քաղաքէն Վանանդոյ »: Հաւասարապէս ընթերցողաց և վայելողաց աղօթքին կը յանձնէ « զերեւանեցի զակը Յօնան որդրանուէր քահանայն՝ և զՊօւզայեցի պարոն Պօղոսն . քանզի ոչ ունելով բաւականապէս զգրամն ապելոց զայն երկու զրեանս , վասն որյ հարկաւորեցայ ընկերանալ ընդ տեառն Յովհաննու սրբանուէր քահանայի և ընդ Զուզայեցի պարոն Պօղոսին , սակս երկու գրեանց , նախ շարակնոցի և ապա ժամագրքի » . . .

Ուրիշ տպագրութիւն մ'ալ ըրաւ նոյն զրոց ի նմին քաղաքի և յիշում տպարանի ի 1688 թաւին , համանման նախընթացին և առանց մասնաւոր պատմական յիշատակարանի :

Այս հրատարակութեան վրայ եօթն տարի նոր հայկական տպագրութեան յիշատակութիւն կամ զիգր չենք գտներ ի գործարանի վանանդեցույն . բայց այլ միջոցին կը տեսնենք որ կու զան կը հաստատուին յԱմսկերտամ որիշ նորանոր ազգայինք՝ ազգականք Վանանդեցույն , թովլման եպիսկոպոս Գողթնեաց , որյ մօրեղորդրողին է Յօվհաննէս , և նոյն եպիսկոպոսին եղարաց սրդիք՝ Ղօւկաս և Միքայէլ , որոց համար կ'ըսուի իրեն տպագրած զրոց միոյն յիշատակարանի մը մէջ , թէ և են վարքք և ներհմանացեալք լամբինական լերուի և կրթեցեալք յուսումն փիլիսոփայական բազմազան հանճարոյ »:

Վանանդեցույն Յովհաննա հրատարակութիւններէն յայտնապէս կը տեսնուի իր մեծ հմտութիւնն և վարժութիւնն այն արհեստին մէջ , ընտիր ախորժակն և եւրոպական այն ատենուան ճաշակին յառաջապիմութեան հետ

համարայլ ընթանալը , ուստի և յիրավէ և արժանապէս կը գրուատուէր ի կաթողիկոսէն , ինչպէս տեսանք բան միայն կը պակտէր թերեւս իրեն . զրամական միջոցաց դիրութիւն անծանօթ ու հեռաւոր օտարութեան մէջ , որով կը բռնազատուէր միոյն կամ միւսպէն հետ ընկերութիւն կազմել , թէ ծախուց զիրութեան և թէ շահաղիսութեան տեսակիտով : ՄԵզ հաւանական կ'երենայթէ այս կրկին նպատակաւ՝ Յովինաննու ու մանզակութեան հասած , իրենց ուսմամբն և լեզուափառութեամբ ձեռնարկեալ գործյն աւելի ընդարձակութիւն , պայծառութիւն , փայլ տալու , որով և յազգէն՝ աւելի մեծ ընդանելութեան և օգափ :

Եւ յիրավէ կը տեսնենք որ մեծ և ամենայն գովութեան արժանի արտապրութիւնն մը կ'ընծայէ Թուլմաս Գողթնեաց՝ Համատարած մեծ աշխարհացոյց մը , ի 1695 , այս առանաւոր յիշառակարսանաւ .

«Նորոգ քանակէ գեղեցկանէս գանրանշան ,  
Փոխարերեաց Թօսմա յենուորդ ուստ Աշանանգան :  
Փորագութիւն յոյժ տանկալէ  
ի ձեռն եղարաց նորապատ .  
Աշբանան Ըսկանէկէ  
Եւ Պետրոսի քայլապարք .  
Ըստ Պետրոսու հրմանանի  
Երկամբք բազմոք յայտ ածողէ  
Երբուրորդի իմ անդրանիկ  
Պահեացէ ին յիւրօւմ ծոցի» :

Գրեթէ երկու զար եաքը՝ փորագութեան այսշափ և այսպիսի յառաջադիմութենէ մը յետոյ , արուեստին հմանոց և հետամուաքը զեռ եւս զարմանօք և հիացմանը կը նկատեն զայն , և որչափ ալ զիհաւոր արդիւքը եւրպացի արուեստագիտիւն ընծայն , գովութեան մեծ մաս մ'ալ իրեն առաջնորդողին կը մերարերն աննախանձար , Պուկայ վանանդեցոյ Նուրինան :

Յաջորդ տարին Համատարածին վերաբերեալ ուրիշ երկասիրութիւնն մ'ալ ընծայեցին հրատարակողքն , կուելով զայն Բանալի համատարած աշխարհացոյցի , այսպիսի յառաջարան՝ աեղեկութեամբ . « Շահակառութիւն և պիտանութիւն որ յաշխարհացուցէն յառաջապայի . բայց եւս քեւս պիտա-

նանայ վաճառականաց , մանաւանդ հայկազարմից , որը ի մէջ ասիական և արևելական ազգաց , ընդունելիք և յոշ սակառուց սիրելիք , ընդ ամենայն աշխարհն զանգոթթ երթեւեկութիւն ունելով . զամենայն երկիր առ հարելով յաճախին . վասն որյո ոչ ընդ վայր աշխատամբէ ի շահ և յօգուտ մերազնեացց , ի լոյս ածելով զշամատարած աշխարհացոյն հայկական բառիւ և ատախու տրպեցեալ . . . Յիշեցէք . . . զեռամեծ վարդապետն մեր և զհեզանագի վեհն վսեմախորհուրդը զաէր թօսման եպիսկոպոսն սրբյա Խաչի վանիցն Գողթնեաց , զի ընծայէ զծաղիկ բերկութեան ցանկալի ազգին Որամեան . եւս զոյներախս և զմիակ բուն տպագիրն Հայոց զանուանին Մատթէոս Յոհաննիսն , ապա և զարուակ զմիրս Պուկաս , ծնունդո Գրիգորի , սերունդո Նորիջանի , սնունդո Հոօմայոս , և զմատուցօս այսր Գործակի ու :

Մի և նոյն թուականին տպագրած է Վանանդեցի եպիսկոպոսը՝ Նմանուրիւն Քրիստոսի կողմած զրոց երկրորդ հրատարակութիւն մի , որ ի 1674 առաջին տպագրութիւն անեցեր էր ի Հոսվմէն ի Յիշառակարանին . և . . . Ես հեզս և ողբոց բազմաց արդակայեալս . . . արտաքսեալ յերամաց և ի մասնէ տենչալի վայրից Վանանատո . . . պատեհաւոր վարկայ զհամեղախօս և զգացցրանաշակ զիրս թօսմայի վեհմիացոյ , տպագրել յիմում զործարանի , զոր յարմարեցի և կազմեցի վշարօց անթուելեօք . այլ և զծախս նոցունց յիմոց ընկից , զի գոնէ յընթերցասէր եղարցոց խնդրեցից օմիսա սիրոյ . . . Յիշել մազթեմ զրազմերախս և զկառավարօղ գործարանին և բանհմուտ և վարժ յարուեստ ապագրութեան զվարպետ Մատթէոսն , որ է որդի եղրօր մօր իմն . . . և զորդի եղբարց իմոց զլուկաս և զՄիկայէլ . . . :

Այս գրութենէն կը հասկրցաւ , թէ զօրծարանն արգէն վանանդեցի եպիսկոպոսն ձեռքն անցած էր , և ծախսն իրեն վրայ . իսկ Մատթէոս կը մնար կառավարիչ իր արքէն ծանօթ և զովելի վարժութեամբն և հմասութեամբ յայնմ արօւեստի . Այս խօսքին ստուգութիւնը յայտնապէս կ'երենայ

1698 տպագրուած Համաձայնուրիւն հրե-  
գիւեսակ ամսոց , և այլն , կոշուած երկառ  
սիրութեան մէջ , որոյ համար կ'ըստի ի ճա-  
կատուն և Շարեցեալ ի Յօհանիսիւեան Մատ-  
թէոսէ , և յօրինեցեալ յապիրատ Նորիթաւ-  
նեան Ղուկասէ Վանանդեցոյ ։ Տպիւը և  
ծախիւք թօմայ եռամեծ վարդապետին , և  
վանդցն Գողթնեաց Ս. Խաչին սրբափայլ  
եպիսկոպոսին , յամի տեսուն 1698 յիմշո-  
ղերտամ»։ Ուր տասն առող ոտանաւոր զրուած-  
քէ մը ետքը . « Վերոյգրեցեալ շափառանական  
խնդրուածն՝ է տացեալ յԵրամեծ թօմայ  
Վանանդեան Բարունուցն , որում ենթարկին  
Տպարանս , ամենայն աշխատանք և աշխա-  
տաւորք Տպարանիսո ։ որ է բուել թէ ինքն  
է և ոչ այլ որ գործարանին աէրը :

Նոյն 1698 տարւոյն կը տպագրի « Աս-  
տուածաշոնչն նոր կտակարան՝ տպագրեցեալ  
վայելազիր և գեղեցկայիր յօրինուածովք . ։  
Հաւանութեամբ , ասիւը և ծախիւք թօմայ  
եռամեծ վարդապետին » . և որ ի յիշաակա-  
րանին կ'իմացընէ թէ և վաղ ուրեմն նախ  
տպագրեցեալ դոյր ի մեծէ և յերջանկագոյն  
վարդապետէն Բլիկանայ Երեւանեցոյ . . . Ուս-  
տի և ես յօգնազան վիրօք լցեալս ձեռն  
արիի երկրորդւում տպագրել բազում վրշ-  
տօք ։ 1700ին տպագրուած են երկրորդ  
մասը՝ Գործք առաքելուց թուղուք , և այլն :

Իսկ ի 1699՝ երկասիրութեամբ Մատ-  
թէոսի և Ղուկասու Վանանդեցեաց և «տը-  
պիւք և ծախիւք եռամեծ բարունուցն թօ-  
մայ» , կը հրատարակուի Դուռն իմաստու-  
րեան կամ Ուսկեայ դուռն դպրատան կո-  
չուած գիրքը , « վասն զեռակիրժ և խակա-  
վարժ մերազնեայ մանկանց » , այլ և այլ  
նախնական գիտելեօք և հետաքրքրական տե-  
ղեկութիւններ պարունակող զրուած մը , որ  
ժամանակին մեծապէս օգտակար եղած է :  
Ոչ նուազ կարեռութիւն ունեցոյ մատենիկ  
մ'էր նոյն ապրույն մէջ տպագրուած « Գանձ  
շափոց , կշոց , թուոց և զրամից բորոյ աշ-  
խարհի » գիրքը . « որ է , ինչպէս ի ճակա-  
սուն կը նշանակուի , գիտութիւն ամենայն  
տեսակ կշոց , շափոց և զրամից . որով բո-  
լոր աշխարհի վաճառականութիւնն վարի :  
Ժողովեալ և ի մի վայր հաւաքեալ աշխա-

տութեամբ Ղուկասու՝ տպաշնորհ շահընկալի  
Վանանդեցոյ : Ծախիւք և ի խնդրոյ հայց-  
ման Զուզայեցի Խաչատուրի որդի պարոն  
Պետրոսի ։ — Տումար կամ Պարզառումար  
մ'ալ հրատարակուած է և նոյն տարին , յո-  
րում նաև Յովասահու տադ , Մարմնախս-  
դաց , Երազահան :

1700ին Գործք առաքելոց գրոց տպա-  
տպագրութիւն մը կը հրատարակուի նոյն  
տպարանէն , և երկու տարիէն՝ թնարանու-  
րիւն իմաստափրական կամ տարերական  
կոշուած գիրք մը . « որ է բան յաղագս տա-  
րերաց և տարերական որակութեանց , խառ-  
նուածոց և վիթրամբարձ զրուանացն ։ ուստի  
գոյանայ ամպն , մոայլն , և այլն... Յօրի-  
նեալ ի Մատթէոսէ և ի Ղուկասէ յապի-  
րատ վանանդեան գլորաց , և ի պէտո բանա-  
սէր յերանզեայ եղբարց Տպիւք և ծախիւք  
թօմայ եռամեծ բարունուցն » : Խսկ ի յա-  
ռաջաբանին . . . « արասցին յիշման արժանի  
գառաքելաշափափու հայրն մեր զթօմաս եռա-  
մեծ բարունին , զյարմարօզ և զկազմօզ գոր-  
ծարանի , հանգերձ երկսումբք արեանա-  
ռու գործակալօքն՝ Մատթէոսիւ և Ղուկա-  
սիւ . . . » :

Նոյն անձինքն՝ իբրու աշխատակիցք և  
գործակիցք կը յիշատակուին 1704ին տպա-  
գրուած Պաշոսն աստուածային կոշուած գըր-  
քին յիշատակարանին մէջ , յորոց ի խորա-  
գրին նշանակուած կը գանեմք , թէ թարգ-  
մանութիւն է այն « ի լացիական լեզուէ ,  
երկասիրութեամբ ուշեմն վանանդեան Ղո-  
կասու , նուաստ և յետնեալ զպրի ։ ի գոր-  
ծարանի թուղմաս արբէպիսկոպոսի . խսկ ի  
վերջն - « . . . Առդ որոց ընդունելի թօսիցի  
այս նորատիպ գործակն՝ յիշեցեն ի շերմե-  
ռանդ յազօմնն զիսջայ կարապետն (Քա-  
ռամանմանկացն՝ զոր յիշեր էր յաւածագոյն) ,  
հանգերձ սորին զարմիւքն և ժառանգօքն .  
Նաև պարոն Նազարէթի որդի զյետնեալ  
չնչին և զապիկար արբանեակն Յօհաննէս ,  
որոյ հոգաբարձու վերակացութեամբն ապե-  
ցաւ այս հոգոյ գանձա » :

Սոյն այս թուականին տպագրեալ է հե-  
տեւեալն . . . « Յոյնազիմի Աստուածարանական ,  
բարոյական և Քաղաքական իրողութեանց

սահմանիք : Երկասիրութեամբ մեղուաշան առանց ի մի վայր՝ ըստ կարգի այրուքնիցն հաւաքեցեալք : Ի դյու ածեալ տպիւք և արդեամբ առաքելաշտիդ թօմայ եռամեծ վարդապետի վանանդեցոյ ։ Ու հրահանգից վարժարանի , — Զէ տակաւին ներկուռ բանի , և կամ ի հանդէս ֆիլոսոփի — Զանձն իմաստիք կրթեալ չընի . — Զայր առհամանց թ՛ի միտս ունի , — Մեծի տուման ժառանգ լինի : Բամի տեառն 1704 , յԱմիսակամ : Ի վերջ զրոցն՝ լատինական այս բան և վճիռ հայ տառիք . « Ֆի՞նիս կոռթնատ օպուս ու »

Յաջորդ 1705 տարւոյն տպագրեց վանանդեցին , թանա ծիրանաւորին Ձեռքածուրին (Manusciptio) յերկինս կոյուած հոգեւորական զերքն , որ ինչպէս յայտնի է արդէն մեր ընթերցողաց , Յունանեան Վարդան քահանայի թարգմանութիւն է , և յառաջազդյն տպագրուած ի Հոռվլ : Վանանդեցոյն տրպագիրը՝ յիտ ճակատուն անմիջապէս հետեւալ ծանօթութիւնը կը դնէ : « Յամի տեառն մերոյ Յիսոսի Քրիստոսի 1705 . իսկ ըստ Հայոց 1454 , Օգոստոսի 7 , Մարգաց 5 , յԱմսգրտամ քաղաքի՝ տպագրեցաւ այս զիրք վայելուզ և մեծաշահ , ի տպարանի թօմասու վանանդապեցոյ , ծախիւց նորին և հաւանութեամբ ։ Վասն զի գոյր նախկինարար թարգմանեցեալ՝ քաջարան և յամէնիմասա վարդան վարդապետէն , ի լամին լեզուէ ի Հայկական բարբառ : Եւ զի նա յաճախօրէն և լիազէս խօսի , գեղեցկաշար և համեղ բանի , յորդորական և իրատօրէն առ մերայինս , բաւական և քայցր ոնոյ ։ Եւ մեր ոչ համեցաք յօդել ի բան նորին , որք են խօրիս մեղու , ուղինչ սոսն կամ բանջարեղէն , այլ զնորայն ընկալեալք , որք քաղցեալք և ծարաւիք իցեն հմտութեան և ուսման , նորօք լցցեն գիտափք իրեանց և զծարաւ... » և կը սոսրագրէ . « Պարտաւոր թօման ծառայ ծառայից Աստուծոյ , լոկ անուամբ վարդապետ » : Խսկ ի յիշասակարանին... « Անարգիւն և Թափուր յամենայն լաւաց՝ թօման ծառայ Եկեղեցւոյ Քրիստոսի ի վանանդայ Գողթնեաց՝ ... տպեցի քաղցրաճաշակ փիրս Մե-

ծին կարդինալ Բօնային (զոր եռամեծ Վարդան բարոնին լամին լեզուէ թարգմանեաց ի Հայկական բարբառ համեղ և ախորդ ոնոյ ) , յիմում տպարանի և ծախիւց իմութք յ Ամսգրտամ քաղաքի : Յամի տեառն 1705 . Հոկտեմբերի 4 . և ի Ծուրին Հայոց 1455 , Նաւասարդի 9 » : Ու կը յանձնէ յիշել իր հայրը զնուրիլան Նորիթիւնեան , զմայրն զԴիլլաք , հորեղբարքն զՂուկաս և Ստեփանոս , և զեղբարսն զԳրիգոր , Արիստակէս և Յակոբ , և զԱննա քոյրն : Նոյնպէս « Գնարազատ , և զմաներիմ շարաբարգոզ , ուղղագրող և կառավարօղ գրոժակալ ապարանիս մերոյ »... »

Եթօթն տարի իրայ անցնելէն ետքը , յորս Վանանդեցոյ տպարանէն ընծայուած արտադրութեան մը չենք հանդիպէիր , ի 1744 կը հրատարակուի յԱմսգրտամ Շեքուէրի Գանձ արամեան կոյուած հետաքրննական երկասիրութիւն լատին-հայ , ոչ նոյն գործարանէն ընծայուած , այլ իրմէ փոխ առնուած տառերով : Այս միջոցին հանդիպած է թուլմա եպիսկոպոսին մահը և թերեւս այն պատճառու քանի մի տարի դաղրած է տպարանն ի գործոյ : Շեքուէր իր զքքին յառաջարանին մէջ մեծապէս կը դուռաէ զՂուկաս Նորիթան , յորմէ և օգտուած էր իր ձեռնարկին մէջ և իր ուսմանց և տուցչաց խօսքն ընելով , վրայ կը բերէ . Հոյս ductu (Gulielmi Surenhusii) cum Rabbinica , Misnica et Gemarica legerem , fama ad me perferebatur de Reverendissimo Archiepiscopo Armenorum Thoma Golthanensi , ejusque ex fratre nepote Luca Nurigianide , plurimis in nationem suam meritis , et variarum Asiaticarum ac Europearum linguarum cognitione clarissimo . Horum benevolentiam adjuvandos meos in Armenicis conatus cum impetrasset , fidelissimo præceptoris mei auxilio in Haicanæ linguis cognitione feliciter progrediebar... Նորիթանեանն ալ՝ իր աշակերտին և բարեկամին արժանաւոր զովեատը կ'ընէ անօր զքքին վերը զրուած հետեւալ առղերսով .

... « թէ և ասոլոց պյօ քործ փորձեալ,  
Բայց գունչ արին գերազանցեալ .  
Զի Հայկական ներկուու հղեալ  
Զարենատ տառից ներկուու վարժեալ ...  
Քաջդ Յաջանեէ պայծառաբեմ ,  
Գերմանացոց փառը ծագեանեալ  
Ո՞վ ազգ պայտը բարեգ զցեալ .  
Ի Փիւնիկեայ զարմէ սերեալ .  
Ար ոչ հեռի Հայոց հղեալ ,  
Եւ ոչ միմեանց օտար գրահալ .  
Արի գուարթ մեզ մերձեցեալ  
Արպէս խնձոր և ազգակեալ .  
Ալյաս գործով օժանդակեալ .  
ԶԱյրաբանան Գանձը ինչ դանձեալ  
ԶԱ Ալյուգերեան զայ ինչ դանձեալ  
Ի մէջ գանձէց Գաջը նոր ցուցեալ .  
Ամենային և առ գանձացեալ  
Գանձասիրաց յառաջ հեքալ » :

**1744** Թուականին յԱմերտամը եղած  
տպագրութեան մ'ալ կը հանդիպինք , ա-  
մենընտիր արուեստով , կրնանիր ըսկէ զոհար  
տպագրութեան մը , առանց անուան գործա-  
րանի , այսպիսի խորագործ . Համառօտ -  
Քերականութիւն - եւ - Տրամաբանութիւն -  
որ է - վերթութիւն բառի , և կրթու-  
թիւն բանի : - Արաբեալ երկատիրութեամբ  
Յօհանիսի վարդապետի Զուղայեցոյ : - Յ'Ա-  
թոռակալութեանն Էջմիածնայ - Տեառն Ա-  
ղքասաննրի ամենից Հայոց - կաթողիկոսի :  
Տպագրեցեալ - Յ'ամի Փրկչին 1744 . և  
Հայոց 1460 - ՅԱմողրտամ :

Վանանդեցոյ մանր և ընաիր նորածոյլ  
գրերով եղած է այս տպագրութիւն , 78 փո-  
քրադիր Էջեռու մէջ ամփոփուած , առանց  
յիշատակարանի մը : Միայն յ'Էջ 36 , « Եւ  
Տուղին մակացաւթիւն մակացուացն ճնի-  
ցելոյն և Բյդիցելոյն . և ամենապաւէ պատ-  
ճառին , փառք . պատիւ . և գոհութիւն , և  
օրհնութիւն այժմ , և անսպառ յաւիտենից  
ամէն » :

Նոյնայէս և ի վերջին (78) իջին . և իւ  
Քրիստոսի շնորհնդին մակացութիւն մակա-  
ցուացն փառք և պատիւ յաւիտեանս յաւի-  
տենից՝ ամէն :

Տարաձայն , տառալծորդ , նրբարան՝ և բա-  
նակու տառարկութիւն :

Գեղ կամակար անծագ հորդէ .

Կեզ կամակոր ձանձախ յորդէ .

Ցեղ զայս համը գիրք ի առիկ հոլով .


Հեղ զայն յամը գիրք ի յարկս յոլով .  
Ամաց հրէիք , ամաց պատուէր ,  
Զի էր պատուէր՝ զի նա պատուէր :

Եսիսկոպոսին մահուրնէն ետքը տպա-  
րանին իրաւունց , ծախք և բովանդակ իր-  
նամիք իրեն հօրեգբօրբգոյն վրայ կը մնար ,  
Ղուկասու վանանդեցոյ . և օտար աշխարհի  
մէջ ձեռնարկուած այն ծանր գործը՝ տպաւել  
եւս ծանրանար ւ 1745 թուականին նոյն  
տպարանէն հրատարակուած գրքի մը մէջ  
լիուլիք կը խօսի Վանանդեցին իր գտնուած  
գժուարին զիրգին վրայ : Այս գիրքն է Հա-  
յելի ատոռածածոյնէլ գրոց հին կոտայտանի  
կոչուածը , « պարզաբանեալ վյայելալոր տա-  
պաշտութեամբ . զիրանամ և համառոտա-  
պատում հոգեշահ մեկնաթեամբ : Երկասի-  
րութիւն է նոյն Ղուկասու զգրի , հրատա-  
րակեալ ծախիւը խօշագագայ Պօղոսի որդույ  
պարոն Պետրոսին... Յամի 1745 , ի ալ-  
պարանի , ինչպէս կը նշանակուի ի ճակա-  
տուն , Ղուկասու վանանդեցոյ , յԱմողէ-  
լուամ» : Բարերար հրատարակին առաջար-  
կեր է հեղինակին որ այս երկասիրութեան  
ձեռք զարնէ . բանզի , կ'ըսէ , ի նախերգանի ,  
բարենախանձ և կորպուատիր երեսուն և երկու  
ամեայ երիտասարդն Պետրոս հայելոյ ի ճո-  
խութիւն երօոպացոց՝ ակա յազնագիմի հո-  
գեշահ և հոգեկեցոյց գրոցն՝ որով խայտայ  
բոլոր կալուածն Երոպայու , ևս և վերա-  
թեւեալ մասօց գիտելով զպակաս հոգեորու-  
թիւնս Արամեան ազգին , սակա նոյնասա-  
րա բուսաւոր գրոց նուազութեան , բարե-  
պաշա նախանձու փառեալ յօմարակամ սի-  
րով գօտեւորեցաւ ի լոյս ամել ծախիւը իւ-  
րովիք զայս առաջիկայ գործս , զայս լուսաւու  
անշէջ ճրագս , և զնորատունկ հոգեւոր բու-  
րաստան յանձինջ յիշատակ իւր և առնմին  
իւրոյ , նաև ի պայծառափայլութիւն բարե-  
պաշաստէր երգարացն Հայկակունեաց : Գոյսի  
առ այս գոլութեանց արժանի պարոն Պե-  
տրոսի ի վերայ այսպիսի շընաղ զիտաւորու-  
թեան , յորդորեաց զնէզա յայսպիսի տաժա-  
նակիր գործ միջամսւի իշնել ... ոչ կարացի  
ստունկանել զայսպիսի հարկէ ... այլ ... յանձն  
ամի գնալ ընդ անհետ ճանապարհն , թէ-  
պէտեւ յոյժ գժուարին և աբնելի մահաւանդ

Հեղամողձուկ անձինս : Քանզի սրբացեալ թշուաս ի հեղահովի հաւան իմայ Թօմայ եռափայլ եպիկոպոսէն ի Տէր հանգուցելոյ , և մենացեալ յարեանտու ընկերաց , կեամ բքաբեր հողմով ալէկծեալ , և ևս վասն անմիթար վայրաց »... Ապա կը խնդրէ յիշել՝ բաց յայլոց և ի թօմայ եպիկոպոսէ հանգուցելոյ , « տրուպ գպիրս Ղոկաս , ծնունդս Գրիգորեան , սերունդս Վանանդեան , և անձանձիր տքնութեամբ յարմարուս , յիմում իսկ ապարանի տպօզս այս նորակերտ բուրսասանիս... Հոսկ յեաց զփոքիկ պատանին քարեան առուն իմ և զձեռնասունն Յօհաննէս Նորիթանեան , որ խոտ դեռքոյս հասակին տուաել քան զիար իւր աշխատի յառաջիկայ տարսապարհակ ծանրաբեռն արհեստի յայլեւայլ պաշտօնս »... Նոյնպէս և ի յիշատակարանին մեծամեծ զովեստից զրաբերարն և իրեն ազնիւ տանը զրուատելէն ետքը՝ կը յաւելու... « ի վախճանի յիշեցէք յաղօթս ձեր գնարազատ և զմոներիմ տպարանիս մատակարար և զինակ նորածին գործոյս զանձնապատ գլիրս Ղոկաս Նորիթանեան , սերունդս Գողթնեան և ծնունդս վանանդեան . ևս և զայրեանսառուն իմ յՅօհաննէս պատանեակն Նորիր

չանեան . որք ըստ կարի և պաշտօնի մերում աշխատեցար և աշխատիթար հարազատօքէն...»

Նոյն սրբամթեան և անմիթար տարութեան յիշատակաթիւնը կ'ընէ Վանանդեցին Ղակաս՝ մի և նոյն տարուան մէջ տպագրուած Սաղմոսարանին վերջը , որոց համար կ'ըսէ թէ վերոյիշեալ պատանեակն թովհաննէս բուլոր գիրքը « մերգուածան քրոսամբք շարակարգեաց . և զայլ բազում դժուարակիր աշխատան տպագրութեանն մոներմարար յանձննէտ : « Թօմայ եռափայլ եպիկոպոսին » յիշատակն ընելով , « որոյ յոդնաջան քըրտամբքն , կ'ըսէ , կանգնեցաւ այս գեղեցկատիպ , և հիբոյս՝ կուակաւ նորին ի ժառանգութիւն ժամանեալ տպարանս : Նաև ի ժամանակի տպագրութեանս տարերը փոփոխեալ ունէին զիրեանց զբնութիւնս ըստ քերթոզանօրն , պարուն երաշտացեալ , ամառն անձեւայոյզ , աշունն ձմեռնացեալ և ձմեռն մրկալից յերկարացեալ » : Գաղղիացի մատենագէտ մը այս տպագրութեան համար կը ծանօթաբանէ . Cette rare édition du Psautier est ornée d'un grand nombre des figures gravées sur bois par Van Sichem , où ժամանակին հռչականուն փորագրող մ'էր : Ճարաշարելի



## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

SUL LIBRO DI GIUDITTA

NELLA VERSIONE ARMENA

ՅՈՒԴԻԹԻՑ ԳԻՐՔՆ

Ի ՀԱՅ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԵԱՐ

Come l'antica legge così la nuova, come i libri che paiono scoperti a ciascuno così i nascosti, gli apocrifi. Hanno questi una voce greca, che bisogna sentire ed intendere; è voce che si ripercuote e che, al risonare degli echi, confonde; è voce che dall'antico viene, nel presente si sparge, all'avvenire si dirizza, acuta, rumorosa, solenne. Fa da eco anche l'armeno; ma se giova che via via, nei libri degli eruditi,

ի նշակ հին օրէնքը՝ այսպէս նորը , ինչպէս այն զրեբեր՝ որոնք ամենուն յայտնիք կ'երկին , այսպէս ժաժուկները՝ անյայաները : Սորա յունարէն ձայն մ'ունին , զոր պէտք է լսել և հասկնալ . ձայն մ'է՝ որ կրիին կը բախի և որ , ի հնչել արձագանգաց , կը շփոթէ . ձայն մ'է՝ որ հինէն կու զայ , ներկային մէջ կը ծաւալի , ապագային կ'ուղղուի , սոր , շառաչուն , մեծաշուր : Հայն ևս նորա արձագանգ մ'է .